

ԾՐԱԳԻՐ

«ՊՏՂԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲՆԱԾԻՆ ԱՐԱՏՆԵՐԻ ԵՎ ՔՐՈՄՈՍՈՄԱՅԻՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԵՐԻՆԱՏԱԼ ԱԽՏՈՐՈՇՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ» ԿԱՏՅԱ ՆԵԿՐԱՍՈՎԱՅԻ ԵՐԿՕՐՅԱ ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԴԱՍԸՆԹԱՅԻ

Հունիսի 15-16, 2019թ., ք. Երևան («Բեսթ Վեսթերն» կոնգրես հյուրանոց)

Մանկաբարձությունում և գինեկոլոգիայում ուլտրաձայնային ախտորոշման
հայկական ասոցիացիա

Օր 1՝ հունիսի 15	
09:30-10:00	Մասնակիցների գրանցում
10:00-13:00	Հղիության առաջին եռամսյակ՝ հատուկ ուշադրություն փոքր մանրամասներին: 1. Հղիության առաջին եռամսյակում պտղի ուլտրաձայնային հետազոտության ժամանակակից հնարավորությունները: 2. Բազմապտուղ հղիությունը որպես վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաների կիրառման անխուսափելի հետևանք՝ վարման մարտավարություն և սեփական փորձի վերլուծություն: Եզակի կլինիկական դիտարկումներ և դրանց վերլուծությունը: 3. Ոչ ինվազիվ պրենատալ թեստի դերը և տեղը պտղի քրոմոսոմային պաթոլոգիայի պրենատալ ախտորոշման ժամանակ: 4. Որքան հեշտ է բաց թողնել 21 տրիսոմիան 1-ին և 2-րդ եռամսյակների ընթացքում իրականացվող սկրինինգային ուլտրաձայնային հետազոտությունների ժամանակ:
13:00-14:00	Ճաշի ընդմիջում
14:00-15:30	Ինչու՞ պրենատալ ախտորոշման բժիշկը պետք է իմանա գենետիկա կամ իր կողքին ունենա լավ բժիշկ-գենետիկ: 1. Զարգացման բնածին արատներ և ցիտոգենետիկական հետազոտման նորմալ արդյունքները՝ ի՞նչ անել հետո: 2. Ընկերքի և պտղի մոզաիցիզմը: 3. Առեղծվածային կլինիկական դիտարկումների ներկայացում:
15:30-16:00	Որոշում ենք միասին: Ինտերակտիվ խաղ լսարանի հետ՝ առցանց քվեարկությամբ: Հաղթողը ստանում է ԵՄՍՍ Նեկրասովայի նոր գիրքը՝ «Պրենատալ ախտորոշում բազմապտուղ հղիության ժամանակ»:
16:00-16:30	Live scan հետազոտություն՝

	Պտղի անատոմիայի դիտարկում հղիության 12-րդ շաբաթում:
Օր 2՝ հունիսի 16	
10:00-13:00	Ինչպե՞ս է պետք ուսումնասիրել պտղի սիրտը և չվախենալ դրանից: 1. Հղիության առաջին եռամսյակում դոպլեր հետազոտության անվտանգությունը: 2. ISUOG-ի առաջարկները պտղի սրտի հիմնական և ընդլայնված հետազոտության վերաբերյալ: 3. Երեք անոթների և շնչափողի կտրվածքի դերը պտղի սրտի արատների ախտորոշման մեջ: 4. Պտղի սրտի ամենատարածված արատները: 5. Հղիության երկրորդ եռամսյակի պտղի սրտի արատների կլինիկական օրինակներ՝ որոշում ենք լսարանի հետ միասին: 6. Հղիության առաջին եռամսյակում պտղի սրտի արատների ախտորոշում:
13:00-14:00	Ճաշի ընդմիջում
14:00-16:00	Հղիության 2-րդ եռամսյակ՝ ինչպե՞ս գեղեցիկ և արագ կատարել պտղի անատոմիայի դիտարկում: 1. 18-22 շաբաթների ընթացքում ուլտրաձայնային հետազոտման չափանիշները: 2. ԿՆՀ արատներ. Գոլոպրոզենցեֆալիա: Հաճախակի և հազվադեպ հանդիպող ԿՆՀ-ի արատներ:
16:00-16:30	Live scan հետազոտություն՝ Պտղի անատոմիայի դիտարկում հղիության 20-րդ շաբաթում

Թիրախային լսարան՝ մանկաբարձ-գինեկոլոգներ, ռադիոլոգներ, սոնոգրաֆիստներ:
Մասնակիցների ակնկալվող թվաքանակ՝ 60 հոգի:

Դասընթացավար՝

բ.գ.թ. Կատյա Ներկրասովա – Սանկտ-Պետերբուրգի Պտղի բժշկության կենտրոնի գլխավոր բժիշկ